ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«14» 04 2023թ.

«ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ
ՏԻԳՐԱՆ ՎԱՐՏԱՆՈՎԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
08.12.2022 թ. կնքված ՄԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/04-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Միգրացիոն ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԼԵՄՈՒՐ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2022 թվականի դեկտեմբերի 8-ին կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «ՄԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/04-1» պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան: ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 2023 թվականի հունվարի 17-ին Պայմանագրի շրջանակում կնքվել է թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):

Վաճառողը Պայմանագրի 1.1. կետի համաձայն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), սակայն հիմք ընդունելով Վաճառողի 13.04.2023 թվականի տեղեկացումը ապրանքի մատակարարման անհնարինության վերաբերյալ հայտնի է դառնում, որ Պայմանագիրը չի կարող կատարվել և ենթակա է լուծման: Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված է, որ պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) միակողմանի լուծվում է, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Գնորդը որոշում է՝ միակողմանի լրիվ հրաժարվել պայմանագրից՝ համարելով այն լուծված, որի վերաբերյալ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթների համաձայն սույնով իրականացնում է Վաճառողին պատշաճ ծանուցում:

Որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը, և Վաճառողը համարվում է պայմանագիրը

ք. Երևան, 0037 Կ. Ուլնեցու 31 Հեռ.՝ (+37460) 275-014

ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Միաժամանակ Պայմանագիրն ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը կուղարկի Վաճառողի էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի ամբողջությամբ միակողմանի լուծմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վաճառողին առաջարկվում է մինչև 2023 թվականի ապրիլի 20–ը ներառյալ «ՄԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/04-1» գնման ընթացակարգի հրավերի հավելված 3.2-ով (որակավորման ապահովում) և 4.1-ով (պայմանագրի ապահովում) տրված տուժանքի մասին համաձայնագրերին կից ներկայացված վճարման պահանջագրերերի 14-րդ կետերում նշված գումարի չափով որակավորման ապահովումը՝ 90000800664 հաշվեհամարին, իսկ պայմանագրի ապահովումը՝ 900005000758 հաշվեհամարին և վճարման հանձնարարականները ներկայացնել Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն: Վերը նշված պահանջը կատարելու պարագայում Վաճառողը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

14.04.2023

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Подписано: ABRAHAMYAN HAMBARDZUM 1812690177

Հարգանքով՝

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ